

Народный совет
Свердловской области
г. Сverdlovsk

9(47.925)

19-35

1928

2306

31 AUG 2007

05 SEP 2011

Մ Ա Ր Ե Ն Ց

ՀԱՅԿԱԿԱՆ

ՍՄԵՆԱԿԵԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Դ Ե Մ Ք Ը

9(47.925)

Մ-35

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Է զ ա ճ — 1928

9(47.825)

Մ. 35

ՄԱՐԵՆՑ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն
ՍՄԵՆԱՎԵԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ
Դ Ե Մ Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

1188

2
1306g

22 APR 2014

121 429

Գրառեպ. № 755 ք. հ. 753 Տիրաժ 2000
Պետհրատի 2-րդ տպարան Յերևան 662



ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գրքույկը փոքր ինչ լրացված հրատարակությունն է մեր նույնանուն հոգվածի, վոր դեռեղված է «Большевик Закавказья» ամսագրի 1928 թ. №3-4-ում: Այս գրքույկն, իհարկե, չի սպառում հայկական ամենավերականգնության պրոբլեմը, վոր դժբախտաբար մեկանում շատ քիչ է լուստարանված:

Հեղինակը փորձել է տալ հայկական նացիոնալիստական իդեոլոգիայի այդ ճյուղի հիմնական գծերը: Բրոշյուրիս հիմքում դրված է Հովհ. Քաջաղնունու «Դաշնակցությունն անելիք չունի այլևիս» և Արշ. Ղազարյանի «Մոմենտը պահանջում է» գրքույկների վերլուծությունը:

Յերևան

29 ապրիլի 1928 թ.

28818-60

1914 թվին հաջ սոցիալ-շովինիստ, սպեցիֆիզմի իդեոլոգ Դավիթ Անանունի դեմ գրած «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» վերաբուծյուն ունեցող իր բրոշյուրում Ստեփան Շահումյանն ասում է.

«Ազգայնականությունը, ինչպես և ամեն մի ջախջախված ու մահվան դատապարտված իդեոլոգիա, կարողանում է ճարպկորեն, խորամանկությամբ հարմարվել ու կեղծավորություն անել այնպես, ինչպես այդ անում է այժմ վոդչ բուրժուական իդեոլոգիան: (С. Г. Шаумян. Статьи и речи. Изд. «Бакинский рабочий», стр. 57. Ընդգծումը մերն է. Մ.):

Այս բնորոշումն առանձնապես ճիշտ է այժմ, չե՛րբ նացիոնալիզմին, մանավանդ Անդրկովկասում, հասցրված է վճռական հարված հենց պրոլետարական հեղափոխության ակտով: Ազգայնականության իդեոլոգիան, ինչպես և առհասարակ վոդչ բուրժուական իդեոլոգիան, այնքան է վարկաբեկված, խորհուրդներն արմատներն այնքան խորն են լայն ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ, վոր բացահայտ, առանց «խորամանկության» ազգայնական իդեոլոգիան այժմ, իհարկե, չի կարող հրապարակ զալ: Ազգայնականությունը տարրեր ձևերով և հարմարվում պրոլետարիատի գիտատուրային, թափանցիկ ճեղք փնտռելով իր համար խորհուրդների ամբողջ որդանիգմում:

Հարմարվող բուրժուական իդեոլոգիայի տեսակ-

28818-60

6

ներից մեկն էլ այսպես կոչված սմենափխականութունն է, վորը ծագել է, ինչպես հայտնի է, 1921—22 թ. թ. և վորի համառոտական պարագլուխը պրոֆ. Ուստրյալովն է։ Այդ պարոնը «ճանաչել է» խորհրդային իշխանությունը, բալլելիկներին և Լենինին վոչ թե այն պատճառով, վոր մեր չեղկրում բանվոր դասակարգի իշխանությունն է հաստատված, այլ այն պատճառով, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը «պահպանեց ուս պետություն ինքնուրույնությունը»։

Սմենափխականության մեջ հիմնական դրույթն այն է, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը կվերասերվի բուրժուակաճի. նա հույս է դնում այսպես կոչված սերմիզորի վրա։

«Յեա կողմնակից եմ խորհրդային իշխանության պաշտպանության, — ասում էր 1921 թ. Ուստրյալովը, — թեև յեղել եմ կադետ, բուրժուա, պաշտպանել եմ ինտերվենցիան, — յեա կողմնակից եմ խորհրդային իշխանության պաշտպանության այն պատճառով, վոր նա վոտք է դրել մի ճանապարհ, վորով գլորվում է դեպի սովորական բուրժուական իշխանություն»։

Այսպիսի ակնկալություններ ուներ սմենափխական պրոֆ. Ուստրյալովը։

Կուսակցության XI համագումարում Վ. Ի. Լենինը, խոսելով Ուստրյալովի այս հայտնության մասին, նշել է, վոր՝

«Մեզ համար շատ ավելի լավ է, լերը սմենափխականներն այսպես (բացահայտ, ինչպես Ուստրյալովը. Մ.) են դրում, քան յերը նրանցից վոմանք համարյա կոմունիստներ են ձևա-

նում, — այնպես վոր հեռվից թերևս չտարբերես դուցե նա ասածուն է հավատում, դուցե և կոմունիստական հեղափոխությունը»¹⁾։

Սակայն «Տերմիդոր Տերմիդորովիչ» Ուստրյալովի այն հույսերին, թե խորհրդային պետությունը կվերասերվի բուրժուականի, վիճակված չի իրականանալու, վորովհետև պրոլետարական հեղափոխության բուրժուականի վերասերվելու հարցում վճռական գործոն հանդիսանում է սուբյեկտիվ գործոնը-իշխանության պոլիս կանգնած պրոլետարիատի քաղաքականությունը։

Լենինն աներկմտելի ասել է, վոր մենք ունենք «այն բոլորն, ինչ վոր անհրաժեշտ է և բավական՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար», վոր՝ «10—12 տարվա ճիշտ փոխհարաբերություններ գյուղացիության հետ — և ապահովված է հաղթությունը համաշխարհային մասշտաբով»։

Յեվ վորովհետև իշխանության պոլիս կանգնած բալլելիկյան կուսակցությունն այս 11 տարիների ընթացքում կարողացավ վարել ճիշտ քաղաքականություն գյուղացիության նկատմամբ, իսկ մեր հեղափոխության վերասերման համար սուբյեկտիվ հող չկա (իհարկե, բալլելիկյան և վոչ թե մենշևիկյան — տրոցկիստական — սմենափխական ըմբռնողությունով), — ուստի բանվոր դասակարգի՝ դիրքերը մեր չեղկրում այսօր ավելի քան չերբեք, ամուր են։

Այսպիսով ընթերցողի համար պարզ է Ուստրյալովյան, «ուսական» տիպի սմենափխականության ելությունը։

¹⁾ Լենին, Յերկ. ժող., հատ XVIII մ. 2, էջ 41-42.

1) Իսկ ինչ և հայկական սմենավիտականությունը. վերոնք են նրա հատկանշական, տարրերիչ գծերը: Հայկական սմենավիտականությունը հյուսիսային քննարկմամբ մենք կզբաղվենք մեր ամբողջ բրոշյուրում: Առաջիկ հավաստում ենք, վոր դա խորհրդային իշխանությունը հարմարված հայ ազգայնականությունը տեսակներին մեկն է:

Այժմ անցնենք այդ լեզու դարձած իդեոլոգիական թույնի հյուսիսային քննարկմանը:

Մեր առջին և Արշ. Ղազարյանի - անցյալում ամենառեակցիոն դաշնակցան լիդերի հերկալումս՝ ամենակատարյալ տիպի դաշնակ տակտիկ - սմենավիտականի գրքուկը:

Այդ գրքուկի վերնագիրն է՝ «Մոմենտը պահանջում է»: Դա Ա. Ղազարյանի մի նամակ դիմումն է «հանրապետական Հայաստանի Պարիզի ներկայացուցիչ» վոչ անհատ պարոն Սատիսովին, իսկ «նրա միջոցով հայ հեղափ. Դաշնակցության 10-րդ համագումարին» 1):

Այդ գրքուկը, ինչպես ընթերցողը կտեսնի նրա հետագա վերլուծումից, ներկայացում է չերզվյալ շովինիստ-տակտիկ դաշնակցականի մի ամբողջ ծրագիր: Գրքուկը հրատարակված է Թեհրանում, սակայն մեզ համար անհասկանալի նկատառումներով - չնայած իր

1) Հատկանշական է, վոր դեպի խորհրդային իշխանությունը «լույս» դերը բռնած և իրեն ավելի կոմունիստ համարող, «քան իրենք կոմունիստներն են», Ա. Ղազարյանը խորհրդային Հայաստանի գոյության 5-րդ տարում շարունակում է պարոն Սատիսովին համարել «հանրապետական Հայաստանի (վորպիսի Հայաստան վաղուց է, ինչ գոյություն չունի, Մ.) Պարիզի ներկայացուցիչ»:

ակնհայտ ռեակցիոնություն-նրա վաճառքը թույլատրված և Հայաստանում և Թիֆլիսում: Յերեսանի գրականութենում այդ գրքից այլևս չեն կարող գտնել, - գրքուկը խլիխլ են Յերեսանի «աղատախոս» քաղքենի-ազգայնականները:

Թիֆլիսում այդ բրոշյուրը մինչև այժմ էլ լայնորեն սեկկում է անում «Զակկիդան»¹⁾: Իր այդ իդեոլոգիան Ա. Ղազարյանը քարոզում էր նաև մինչև վերջին ժամանակներս Թեհրանում հրատարակվող իր «Դադափար» թերթի միջոցով, վորի տարածումը Հայաստանում նույնպես թույլատրված էր:

Բայց այս բոլորը դեռ ելի վոչինչ, յեթե Արշ. Ղազարյանի քարոզած բացահայտ նացիոնալիզմին տրվեր բալլչիկյան դադափարական հակահարված: Սակայն, անցիլ է ավելի քան յերկու տարի այդ գրքուկի լույս տեսնելուց հետո, և թշնամու այդ յեկույթը բարեկամի դիմակի տակ՝ չի մերկացվել, ինչպես վոր չի մերկացվել նաև հայկական սմենավիտականություն մյուս ակնաւոր իդեոլոգ Հովհ. Քաջազնունու «Դաշնակցութունն անելիք չունի այլևս» գրքուկը²⁾:

1) Տես՝ «Զակկիդան» հայտարարությունը Ա. Ղազարյանի «Մոմենտը պահանջում է» և մյուս գրքուկների մասին, գետեղված Թիֆլիսի «Պրոլետարի» 1928 թ. № 72-ում:

2) Այդ գրքուկը 1927 թարգմանվել է ռուսերեն և հրատարակվել «Զակկիդան» կողմից, սակայն, դժբախտաբար, նորից ընկ. Ս. Սանոյանի հին առաջաբանով,³ վորտեղ նա գրվաւում է Հովհ. Քաջազնունու «անկեղծութունը» և այլ հատկութունները, բայց չի ասում վոչ մի խոսք «խորհրդային միջոցով անկախ Հայաստան ստեղծելու» այն խորագետ ծրագրի մասին, վորի դադափարը կարմիր թեկով անցնում է այդ գրքուկով:

Այն կարծիքը, վոր զարգացնում են ընկերներից վոմանք կարծես¹⁾ ալդ դրութունն արդարացունելու համար, ասելով, թե ամենավեխական ինտելիգենցիան մեղ հարկավոր է, թե կենինը կտակել է մեղ ոգտագործել կապիտալիզմից ժառանգած բոլոր կուլտուրական ուժերը և ալլն, մեր կարծիքով տվյալ դեպքում քննադատութան չի դիմանում, վորովհետեւ այստեղ հարկավոր և դեռ տակտիկական մանյովր անող ազգայնական բուրժուազիայի իդեոլոգիայի դեմ զաղափարական քաղաքական պալքար մղելու հարց, և վոչ թե մեր տընտեսական ու ալլ հաստատութուններում աշխատող բոլոր ամենավեխական և առհասարակ մեղ թշնամի իդեոլոգներին վարչական կարգով արտաքսելու հարց: Այս **առբեքութունը** հարկավոր է հիշել. մեր կուսակցութունն ուղտադործում է ամեն ինչ և ամենքին մեր հաղթական առաջխաղացման թափն արագացնելու համար: Բայց յերբեք և վոչ մի տեղ կուսակցութունը չի ասել, վոր նա հանուն այդ բանի զոհ կբերի իր զաղափարական դիրքերը: Որինակ պրոֆ. պրոֆ. Ուստրյալովը, կոնդրատեր և ուրիշները, աշխատում են մեր կենտրոնական տնտեսական մարմիններում, սակայն նրանց՝ մեր կուսակցութան նկատմամբ իդեոլոգիապես թշնամական յուրաքանչյուր լեռնութը ստացել և է ստանում և պատշաճ բայլչիկյան հակահարված²⁾:

¹⁾ Այդպիսի միտք է նկատվում որինակ «Մեր հիմնական խնդիրները մեկը» հոդվածում, վոր զետեղված է «Լենինյան ուղի» հանդեսի №1-ում 1928 թ., էջ 10:

²⁾ Տես որինակ, ընկ. Դ. Մարեցկու և Բերձիսի հոդվածներ «Большевик», 1924 թ. համարներում, «կուլակային կուսակցության մանիֆեստը» վերնագրով հոդվածը «Большевик», 1927 թ. №13-ում ընկ. Մարուսիլինի հոդվածը՝ «Ինդուստրացումը և նաբոդնիկության եպիդոմները», տպված «Плановое хозяйство» հանդեսի 1927 թ. №7 և 8-ում և ալլն:

Սակայն, դառնանք մանկրող հայ բուրժուազիայի յերկու ամենաականավոր իդեոլոգների վերոհիշյալ գրքուկներին: Բնորոշն այն է, վոր ալդ հեղինակների արձածած բոլոր հարցերը հպատակեցված են մի «պրորկեմի», վորից Հայաստանի բանվորների և գյուղացիների առամները վաղուց են առնվել, — «միացյալ և անբաժան, թեկուզ Խորհրդային, բայց անկախ Հայաստան» ոտեղծելու պրորկեմին: Տարբեր ձևերով, տարբեր ձանադարհներով են «լուծում» «ծովից ծով Հայաստանի» ավանտյուրիստական ծրագիրը, վոր վաղուց է մերժված Հայաստանի բանվորների և գյուղացիների կողմից, Հովհ. Քաջազունին և Ար. Ղաղարյանը, — հայ բուրժուազիայի ռազմատենչ կուսակցության ալդ յերկու նախկին լիդերները:

Նախ և առաջ Հայաստանի խորհրդայնացման տիպի զնահատման հարցը:

Հայտնի չե, վոր դաշնակ թերերտիկները համառ պնդում են, վոր խորհրդային հեղաշրջումը Հայաստանում արդյունք էր դադտնի դաշինքի, կնքված Խորհրդա-Ռուսաստանի և Թյուրքիայի ու Հայաստանի ներսն ապրող թուրքերի միջև, ընդվորում այդ դավադրութունը կազմակերպվել էր այն պատճառով, վոր «Հայաստանը դոնվում էր Անտանտի հովանավորության տակ և վարում էր նրա քաղաքականութունն Արևելքում» (արժեքավոր իրոստովանութուն, Մ): Այդպիսի «տեսութուն» էր զարգացնում որինակ հայ սոցիալ-շովինիզմի հայտնի առաքյալ «մարքսիստ» Բաշխի Իշխանյանը (վորին Ս. Շահումյանը դեռևս 1914 թ. անվանեց «քրիչական տիպ քաղաքականության մեջ») «Յերկու ամիս բայլչիկական բանտում» վերնագիրն ունեցող

իր գրքույկում (եջ 27): Նրան «լրացնում ե» դաշնակցական տեսարան Վ. Նավասարդյանը:

Ինչպես հայտնի չե, այդ կարծիքին եր մինչև 1923 թ. սկիզբը վողջ հակաբալլևիկյան բանակը: Իսկ 1923 թվից դաշնակա-սպեցիֆիկյան շարքերում սկսեց տեղի ունենալ յուրորինակ շերտավորում: Զատվեց սմենավեխական խմբակ (Հովհ. Քաջազնունի, Ա. Ղազարյան և այլն), վորն այլևս Հայաստանի խորհրդայնացումը—հասարակական-քաղաքական չեքուզթների մի ամբողջ շղթայով՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների չեքկարատե գասակարգային պայքարով պայմանավորված այդ ակտը—չեք համարում «թյուրքերայի հետ հայ բալլևիկների կնքած դավաճանական դաշինքի» արդյունք:1)

Իրա մասին դադարեցին խոսել նաև սպեցիֆիկյան սոցիալ-չովինատները—Դավիթ Անանունը և նրա ընկերները, վորոնք դրանից քիչ առաջ աքլորացած կոչ կլին անում «բոլոր հայ սոցիալիստա-

1) Հովհ. Քաջազնունին հայտարարում է՝ «Կար արդյոք վորեք համաձայնություն բուլևիկների ու թուրքերի միջև:

Մեր շարքերում շատ տարածված է այդ համոզմունքը Կարծում են սակայն, վոր սխալ է այդ...

Բուլևիկները դավադրությունը չեք մեր պորտուկյան պատպաստուր, վոչ իսկ թուրքերի ուժը...» («Դաշն. անկիթ չունի այլևս», եջ 49):

Սակայն բնորոշն այն է, վոր Քաջազնունին այնուամենայնիվ գտնում է, վոր փետրվարյան «պատամբություն» (այսինքն դաշնակցական զադրելի ավանտյուրայի. Մ.) ճնշման պատճառը այն եր, վոր ռայստեղ եր Ռուսաստանի իր կարմիր բանակով, և հայ գյուղացիությունը (1) չեք —վոչ ել Հ.Հ. Դաշնակցությունը—վոր պլաի դիմադրելին նրանց» (եջ 52):

կան կուսակցություններին» — Դաշնակցությունը, եսերներին, մենչեիկներին, սպեցիֆիկներին— «ստեղծել միասնական սոցիալիստական ճակատ և հակադրել այն ռուս մուժիկի, թաթար ցեղի և ներքին թուրքի (այսինքն Հայաստանում ապրող թուրքերի. Մ) ճակատին» 1):

Բայց... հարմարվեցին խորհրդային սահմանադրությունը և հոչակեցին՝ «հայ ազգային մաքի զարգացումը գոյութլուն ունեցող Հայաստանի շրջանակներում և նրա հիմունքով» թեգլիսը նաև այդ սպեցիֆիկյան կկուները:

Իսկ ինչպե՞ս դնահատեցին սմենավեխական իդեոլոգներն «այսպես թե այնպես փաստորեն գոյութլուն ունեցող» Հայաստանը:

«Արաքսի ու Սևանի միջև ունենք այսոր մի փոքրիկ Հանրապետություն, աճուճով աճկախ (!) իսկ իրոք վերահաստատող ռուսական կայսրության (!) ինքնավար ծայրագավառներից մեկը» — Քաջազնունի, (եջ 59, ընդգծումը մերն է. Մ):

Ընդարձակ կոմենտարիաների կարիքը, մեր կարծիքով, այստեղ չի զգացվում, վորովհետև խորհրդային երկրի յուրաքանչյուր աշխատավորի համար պարզ է, վոր պրոլետարական հյուսիսի «վերահաստատվող Ռուսական կայսրություն» վորակումը թշնամու ստոր գրպարտություն է, վորն իհարկե, ունի իր խորը սոցիալական արմատները հենց նրա հեղինակի բնության մեջ: Ամենքին հայտնի չե, վոր մինչև խորհրդային իշխանության հաստատվելը Հայաստանն չեքեք անկախ չի չեղել և լինել չեք կարող, վորովհետև ճնշված ժողովուրդների իսկական անկախությունը հնարավոր է միայն պրոլետարիատի դիկտատուրայի որով:

Այն «դիագնողի» դասակարգային ազդյունները,

1) Քաղում ենք «Մարտակոչի» 1927 թ. № 27-ում զետեղված՝ ընկ. Յե. Սուրենի հոդվածից:

Թե Սորհրդային Հայաստանը «անկախ և անունով», մատնում եւ ինքը Քաջագնունին, չերբ բացահայտ բողոքում եւ այն բանի դեմ, թե խորհրդային չերկրում չկան «ղեմոկրատիկ կարգեր և բացակայում եւ մասնավոր սեփականութեան իրավունքը»:

«Անհատատվող ուսական կայսրութեան» ընդհանուր սխառնում Սորհրդային Հայաստանի ունեցած զրուցեան աշակիսի «սոցիալ-տնտեսական վերլուծութեան» անելով, Հովհ. Քաջագնունին հայտարարում եւ, վոր թեև Դաշնակցութեանն ել, բանից դուրս ե զայիս, ձգտում ե սոցիալիզմի, բայց «պատմականորեն Հայաստանը չի հասունացած սոցիալիզմի համար ու չունի որչեպիտի ավյալները այն միջինումը, վոր կարողանար արդարացնել փորձը: Ամեն մի ձիգ այդ ուղղութեամբ կանխորեն դատապարտված ե անաշուղթեան և հանցանք ե հատկապես հայ աշխատավորութեան հանդեպ» (եջ 62):

Յեկ ապա՝

«Սորհրդային ռեժիմն անհամապատասխան ե հայ իրականութեան պահանջներին» (եջ 69):

Բայց զբանից փոքր ինչ հետո «սոսկ մի հայ» (իր արտահայտութեամբ) Քաջագնունին մատնում ե իր դասակարգային բնութեանը—անզգուշութեամբ հայտնում ե, թե ինչու պրոլետարիատի դիկտատուրան չի համապատասխանում հայ իրականութեանը:

«Բալլընիկների տնտեսական սխառնումը, մասնավոր սեփականութեան իրավունքի բացակայելը (ըհը!) Մ.) անշուշտ քաջայիչ եւն այսօրվա Հայաստանի համար» 1):

1) Բոլորին հայտնի յեն Դաշնակցութեան համար սպանիչ այն թվերը, վորոնք վերաբերում են Հայաստանի տնտեսական շինարարութեան ասպարիզում Սորհրդային Իշխանութեան տնեցած «քաջայիչ» գործնելութեան արդյունքներին:

Դժվար չի նկատել, վոր Դաշնակցութեանը «դատապարտած» Հովհ. Քաջագնունին կրկնում ե այստեղ նույն բանը, ինչի մասին անդադրում տարփողում ե և չի կարող չտարփողել վողջ դաշնակցական մամուլը: Դաշնակցական բոլոր թերթերից ամենաստուրը, «Հայրենիքը» քննութեան առնելով այն հարցը, թե ինչ տարբերութեան կա հին ցարական տիրապետութեան և «Սորհրդային մոսկովյան դիկտատուրայի» միջև, գրում ե.

«Յարական կառավարութեանը, սակայն, ունի այն առավելութեանը, վոր չեր բռնաճուճ ժողովուրդների [(այսինքն բուրժուազիայի. Մ.) սեռեսական ճախածեռութեան վրա չեզ ազգել չեր հաճեցանում երանց (կապիտալիստների. Մ.) հարստացալու, ինչպես Սորհրդային Իշխանութեանն ե անում» («Հայրենիք», № 4451, 1927 թ.):

Յարիզմի հավատարիմ շուն հայ բուրժուազիան և նրա կուսակցութեան Դաշնակցութեանը, ի հարկե, շատ բան ունեն ամոսսելու, ե կա շատ բան, վոր կարող ե նրանց զայրուցել շարժել: Հարստանալ ի հաշիվ աշխատավորական մասսաների և ի լուր վողջ աշխարհի ճշալ «չերկրի հարստանալու» մասին—դա բոլոր յերկրների կապիտալիստների հին պրիոմն ե:

Բայց Քաջագնունին չի բավարարվում այդպիսի վերլուծութեամբ: Նա «տեսական պրոգնոզ» և անում, վոր այսպես թե այնպես «Սորհրդային Իշխանութեանը, իրեն անհարազատ (դաշնակցների համար. Մ.) և անհամապատասխան հայկական իրականութեան, հարկազգովմ կլիցի սալ իր սեզը ուրիշ ուժերի» (եջ 79)—«համազգային դեմոկրատիկ» ուժերի, վորովհետեւ «բոլ-


սեփիզմը միահեծան է լեզվի ինքնակալ (եջ 64), վորովհետև «Հայաստանում չկա վոչ մի դաս կամ շերտ, վոչ մի կուսակցություն կամ խմբակցություն, վոր կարողանար իր ուժերով և իր վրա հենված՝ դիկտատուրա հաստատել»... «Մեր լեզվիքը կարծես հասկապես ստեղծված է դեմոկրատիկ իրավակարգի համար» (!!)

(եջ 61. ընդգծումներն ամեն տեղ մերն են. Մ.): Ավելորդ է, ի հարկե, լերկարարանել Հայաստանը «հատկապես ստեղծված է» համադրային դեմոկրատիայի համար, թե վոչ, վորովհետև ամենքի համար պարզ է, վոր «ազգի դեմոկրատիա» ցուցանակի յետևը թագնված են մանեվրող բուրժուազիայի «դեմոկրատական» կարգերը: Ի դեպ, դեմոկրատիայի մասին: Հովհ. Քաջազնունին, ինչպես և բոլոր տեսակի հակախորհրդային իդեոլոգները, զայրանում և, վոր «Խորհրդային սիստեմը տեսակաճապես յենթադրում է դասակարգային դիկտատուրան, բայց իրականում այսորվա իշխանությունը Հայաստանում—կոմունիստական կուսակցության դիկտատուրան է» (!): Յեվ այնուհետև հարց տալով՝ «կարճը և արդյոք բավարարել մեզ այդ կարգի իշխանությունը», Քաջազնունին պատասխանում է. «Ի հարկե, վոչ»: Բանն ինչպե՞ս և ո՞ւմ համար են գրված այս եփանագին դատողությունները դասակարգային և կուսակցական դիկտատուրայի մասին, փոխառնված մենչեիկական տեսարաններից: Միայն այն թերահավատների համար, վորոնց հալանի չէ այն ճշմարտությունը, թե ինչպես Խորհրդային լերկրի միլիոնավոր աշխատավորներն անմիջականորեն «դիկտատորություն են անում» Խորհուրդների, արհմիությունների և այլ կազմակերպությունների

րի միջոցով: Քաջազնունու զայրույթը հասկանալի է — դրա պատճառները նա հստակ ձևակերպել է մասնավոր սեփականության իրավունքի բացակայության դեմ բարձրացրած իր բողոքի մեջ: Դա—դեմոկրատական քողով ծածկվող դասակարգային թշնամու զայրույթ է պրոլետարիատի դասակարգային դիկտատուրայի դեմ:

Փոքր ինչ այլ կերպ է գնահատում «հայ ժողովրդի ազատագրման» սոցիալ-քաղաքական գործոնները և փոքր ինչ այլ լեզրակացությունների է հանգում Արշակ Ղազարյանը, «Մոմենտը պահանջում է գրքուլի հեղինակը: Ղազարյանի կարծիքի և Քաջազնունու հայացքների միջև գոյություն ունեցող տարբերությունը հիմնական հարցում,—Խորհրդային իշխանության պայմաններում «անկախ և միացյալ Հայաստան» ստեղծելու հարցում—մենք վարը կքննենք: Առաջիկա նշենք, վոր հակառակ Քաջազնունու կարծիքի, վորը գտնում է, թե «բոլշևիզմը միահեծան է և ինքնակալ», Ղազարյանը,—պարզ է, վոր տակտիկական նկատառումներով,—խորհուրդ է տալիս «թանկագին Ալեքսանդր Իվանիչ Խատիսովին և Դաշնակցության 10-րդ համագումարին քանի դեռ ուշ չէ (!) ընդունել, վոր բոլշևիկներն իսկական հեղափոխականներ և սոցիալիստներ են» (եջ 6): Նման գովեստների գնահատականը մենք փոքր ինչ հետո կտանք, իսկ առաջիկա նկատենք, վոր չնայած Քաջազնունու և Ղազարյանի կարծիքների տարբերության մեր կուսակցության գնահատման հարցում, նրանք յերկուսն էլ, կատարելով միևնույն դասակարգի (հայ բուրժուազիայի) տակտիկական մանյովրը, որպեսփոքրն միաբանում են այն հարցում, վոր «Խորհրդային Հայաստանը ԵԱՐԱՆԱԿԱՆ

288/8-60



բլուճն ու ձեկավորումն է հանրապետական (գաւեակ-
ցական. Մ) Հայաստան» (Ղազարյան, էջ 5), վոր
այդ վերջինը «սաղմն է բայլեմվիկական իրավակարգի»
(!) (Ա. Ղազարյան էջ 8): Բանից դուրս է գալիս, վոր
գործնականում բայլեմիկները և դաշնակները միջև
վոչ մի տարբերություն չկա (եջեր 21 և 7), վոր
այն, ինչ դաշնակներն անում էին «միմիատուր չա-
փերով և անսխտեմ, նրանք (բայլեմիկները. Մ)
անում են հսկայական մասշտաբով, ծրագրված և սխ-
տեմով» (եջ 8):

Այսպես է ձայնակցում սմենավեխական Արշակ
Ղազարյանն իր ըստ դասակարգի և ըստ պրոֆեսիայի
չեղբայր՝ Հովհ. Քաջազնունուն, վորը դժբախտաբար
չհանդիպելով վոչ մի առարկության, գեուս 3 4 տարի
սրանից առաջ հայտարարել է, թե «բայլեմիկները մեր
ժառանգներն են (!) և նրանք պետք է շարունակեն
ու առգեճ շարունակում են մեր գործը»: Ավելին.
խորագետ սմենավեխականը հայտարարում է, թե բա-
նից դուրս է գալիս, վոր «եւ բայլեմվիկները գաւեակ-
ցականներ են, միակ գաւեակցականներն ալսուր (!)»:

Բանն ինչո՞ւն է: Ի՞նչ ժառանգություն. Սոր-
հրդային Հայաստանի սահմանադրությամբ դաշնակյան
հանրապետության ի՞նչ ձևավորման մասին են խո-
սում սմենավեխական իդեոլոգները: Ինչպես և ինչո՞ւ—
կհարցնի ընթերցողը,—ազգամտենչ Դաշնակցության
քերկու նախկին լիդերները, վորոնք գտնում են, վոր
«բոլշևիկական սխտեմն իր վողջ հյուսթյամբ անընդու-
նելի լե մեղ (հայերի) համար» (եջ 58), աչնուամենայ-
նիվ «ճանաչեցին» Սորհրդային Սոցիալիստական
Հայաստանը:

Պատճառները մի քանիսն են: Դրանցից հիմնականը
— Սորհրդային իշխանության անսասնությունն է,
մի բան, վոր տեսնում են և չեն կարող չտեսնել նաև
մեր թշնամիները, վորոնցից խելոքներն ու հասուն-
ները այդ փաստից հանում են համապատասխան չեղ-
րակացություններ: Իսկ այդ չեղրակացությունները
սրանք են. պետք է հարմարվել Սորհուրդներին, վորով-
հետ և «ալ լեք տվյալ քաղաքական պայմաններում
չկա», վորովհետև «մեր միակ ապավինն ալսուր Սոր-
հրդային Ռուսաստանն է» (Քաջազնունի, էջ 72):

Յերկու դաշնակ պոլիտիկաններ, վորոնք ժա-
մանակին վաճառքի առարկա էլին դարձրել Հայաս-
տանը և ամբողջ աշխարհում մանդատորներ էլին
փնտռում, առանց քաշվելու, իրը թե հոգուտ «հայ ժո-
ղովրդի» շահերի, առևտրական հաշիվներ են անում, թե՛
վորն է ավելի ձեռնու — «Ռուսաստանը, թե թյուր-
քիան, բոլշևիկները, թե թյուրք միլիականները» (աղ-
դայնականները): «Իհարկե Ռուսաստանը և վոչ թե
թյուրքիան, իհարկե բոլշևիկները և վոչ թե թյուրք
միլիականները (աղդայնականները),» պատասխանում
են սմենավեխականները (եջ 55):

Քաջազնունին «պարզաբանում է» «կեղեքված,
արյունոտված և հանդիստ չունեցող մեր խեղճ ազգին»,
վոր ներկա քաղաքական պայմաններում բոլշևիկները
պետք են Հայաստանին, վորովհետև նրան (Հայաս-
տանին. Մ) պեճ է Ռուսաստանը» (!):

Յեվ աչնուհետև.

«Նա (Ռուսաստանը. Մ) պետք է մեղ,—պետք է
վոչ իբրև սոցիալական կամ պետական ռեժիմ
(կոմունիզմ ու դասակարգային գիկտատուրա)

այլ իբրև քաղաքական ուժ (!) (եջ 91. Ընդգծումը հեղինակինն է):

«Մեր ժողովրդի ազատության բազան, — ձայնակցում է Քաջաղնունուն Արշակ Ղազարյանը, — սովետական Հայաստանն է՝ կոթնաց Ռուսական հզոր բազուկներին: Այլ փրկություն չունի հայ ժողովուրդը, բաց ճա ընտել է (եջ 10, Ընդգծումը հեղինակինն է. Մ):

Ազգայնական ավանտյուրիզմի այս գոհարների հետագա վերլուծությունից ընթերցողը կտեսնի, թե «հզոր Ռուսաստանի միջոցով մեր խեղճ չեղկերի սահմանների լայնացման» ինչ վիթխարի ծրագիր են կառուցում սմենսավեսական իդեոլոգները: Առաջժամ նըշենք, վոր լեթե Քաջաղնունին բացե ի բաց ասում է, վոր այժմ Հայաստանը պետք է կողմնորոշվի դեպի Խորհրդ. Ռուսաստանը, «մեր ժողովրդի անկախությունը գործի համար գրանից սպասվող ոգուտների» պատճառով, ապա Ա. Ղազարյանը փորձում է «տեսա-պատմականորեն» հիմնավորել այդ հիպոթեզը: Նա լուրջ ձևով դատում է, վոր «հայերը վաղուց ի վեր է բնագդական ձգտում են ունեցել դեպի Ռուսաստանը, ինչ Ռուսաստան էլ լինե՛ր նա» (!) (եջ 9), վոր «լեթե վրացին ու թաթարը կովկասում չե՛րբևեցե սանձել է իր շովինիզմը ու հայակերությունը՝ դա չե՛լ շնորհիվ ուղի» (եջ 11) և այլն 1):

Ընթերցողը կհամաձայնի մեզ հետ, վոր խոսքը այստեղ վոչ թե Հայաստանի բանվորների և գյուղա-

1) Ազգական ուրիշ ազդությունների նացիոնալիզմի մասին և դրանով քղաքական շովինիզմ-գա բոլոր չեղկերի ազգայնականների հին պրիոմն է:

ցիներին ձգտման մասին և դեպի Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը, վոչ թե նրանց միջև ստեղծված՝ դաշինքի մասին, վորովհետև այդ դաշինքն ստեղծվել է հայ ազգայնական բուրժուազիայի գլխի վրայով և նրա դեմ: Այդ դատողությունների տակ ուրիշ բան ենք տեսնում: Ամենքին հայտնի չե, թե ի՞նչ շնական հավատարմությունը եր ծառայում հայ բուրժուազիան և նրա կուսակցությունը Դաշնակցությունը Ռուսական ցարիզմին, վորը դրա համար առատաձեռն վարձատրում էր նրանց ամեն տեսակ արտոնություններով առևտրի և այլ ասպարեզներում: Բոլորին հայտնի չե, վոր մթազնելով հայ աշխատավորական զանգվածների դասակարգային դիտակցությունը, հեռու պահելով նրանց անմիջական և իսկական թշնամու՝ հայկական էրապիտալի դեմ պայքարելուց, Դաշնակցությունը զարձնում էր նրանց հայացքները դեպի Թյուրքիայի հայկական վիլայեթները, վորտեղ «թափվում է հայի արյունը, բնաջնջվում է մեր ազգը»: Փաստ է, վոր հայ բուրժուազիան անձնավորաբար ծառայում էր Ռուսաստանի իմպերիալիստական ոպերացիաներին Մերձավոր Արևելքում, վորպես թնդանթի միս վաճառելով աշխատավոր հայերի տասնյակ հազարավոր կյանքեր: Այդ տեսակետից շատ բնորոշ է Թիֆլիսի դաշնակցական այսպես կոչված «ազգային բյուրոյի» ղեկավարացիան, տրված 1914 թ. «համայն Ռուսաստանի ինքնակալ Նիկոլայ 2-ին», նրա Թիֆլիս ժամանելու առթիվ 1):

«Չերք կայսերական Մեծություն, վողորմած թագավոր:

1) Այդ ղեկավարացիան ստորագրել են Դաշնակցության 9 ականավոր լիդերներ, 4 չեպիսկոպոսներ և այսպես կոչված հայ ժողովրդական կուսակցության 3 ներկայացուցիչներ:

Մեր չերջանկությունն անսահման է: Կատարվեց վաղեմի և ջերմ ցանկալին—յերես առ յերես տեսնել Ձեր Մեծությանը, մեր սիրեցյալ Թագավորին: Գլուխ ենք խոնարհեցնում Ձեր Մեծության առաջ:

Հայ ազգաբնակչության պատգամավորությունը արկանում է հոտս Ձերդ Մեծության հավատարիմ հպատակալին անձնվիրության զգացումները և համարձակություն և առնում հավաստիացնել, վոր մեզ համար այս պատմական որում՝ ամբողջ հայ ժողովուրդը ամբողջ հոգով մասնակից է մեր ուրախությանը:

Պատմությունն այդ հնագույն քրիստոնյա ժողովուրդին, վոր կրել է շատ վիշտ ու տանջանք դրացիներից Ասիայում քրիստոնեական հավատի համար, հրահանգում է, վոր միայն Ռուսաստանը և նրա Թագակիր Միապետները հովանավորել և պաշտպանել են նրան, ինչպես պաշտպանել են և այլ քրիստոնյա ժողովուրդներին Արևելքում, վորոնք ստացան ազատություն ռուսական զենքի ուժով: Յեվ այժմ, յերբ փառապանծ ռուսական զորքն իր Վեհապետ Պարագլխի կամքով կռվում է Հայաստանի ձյունապատ բարձրությունների վրա և Ալաշկերտի լայն հովտում թյուրքիայի դեմ, վոր հանդգնեց Գերմանիայի զորամար ձեռք բարձրացնել հզոր Ռուսաստանի վրա, հաջերը հետևելով իրենց նախնյաց պատգամներին, վորոք լիան իբրև մի մարդ պատրաստակամ, ինչպես և Ձեր մյուս հավատարիմ հպատակները, զոհել իրենց կյանքը, դուշքը ի փառս Մեծն Ռուսաստանի և Գահի: Թյուրքիայի հետ պատերազմելու լուրը հուզեց ամբողջ հայկական ժողովուրդը: Ամեն յերկիրներից հաչերը շտապում են մտնել ռուսական փառավոր զինվորության շարքերը

1914. - Հայկական
այդ ժամանակ 23

և իրենց արյունով ծառայել ռուսական զենքի հաջողության:

Աղոթում ենք Ամենաբարձրյալ Աստծուն առաքել հաղթություն թշնամիների վրա Արևմուտքում և Արևելքում:

Մեր սրտերը լցված են ջերմ ցանկությամբ, վոր մեր Թանկագին հայրենիքին բաժին ընկածը ավարտվի ռուսական զենքի նոր փառքով, և Ռուսաստանի պատմական Խեղճերի լուծմամբ Արևելքում: (1)

Թող ազատ ծածանվի ռուսական զրոհակը Բոսֆորի լիվ Դարգանքի վրա: (II)

Թող, Մեծ Թագավոր, Ձեր կամքով ազատություն ստանան թյուրքական լուծի տակ մնացած ժողովուրդները:

Թող հարություն բռնի Ռուսաստանի հովանավորության ներքո դեպի նոր ազատ կյանք Քրիստոսի հավատի համար տանջվող և հայ ժողովուրդը թյուրքիայի:

Պատգամավորությունը խոնարհ չերկրպագում է Ձեր Մեծության և ամբողջ հոգով ցանկանում է Ձեզ և Ձեր Ոգտափալ Տանը յերկարակեցություն և փառք հուրախություն ամբողջ Ռուսաստանի» (տես «Մշակ» 1914 թ. № 271):

«Սոցիալիստ» դաշնակների այս վավերագրի վերաբերյալ մեկնաբանություններ տալը, իհարկե, ավելորդ է: Նրա ավանտյուրիստականությունն ակնհայտ է յուրաքանչյուրի համար: Միայն նկատենք, վոր այս խնդրի շուրջը բավական հետաքրքրական խոստովանություններ կան նաև Քաջազնունու զրքույկում:

«Փարեւ ելինք Ռուսաստանին անվերապահորեն: Տարված ելինք այն հուլիսով, վոր ցարական կառավարութիւնը՝ ի վարձատրութիւն մեր հավատարմութեան, մեր քանգերի ու ոգնութեան (այսինքն հայ աշխատավորների կյանքերի վաճառքի լայն թափի համար. Մ) պիտի շնորհի ավելի կամ պակաս լայն ինքնավարութիւն թե թշուրքիայից ազատագրված հայկական վիլայեթներին և թե Անդրկովկասյան Հայաստանին» (եջ 14, ընդգծումը մերն է Մ):

Այս բոլորից հետո պարզ է չուրաքանչյուրի համար, վոր հայ սահմանվեխականների բարենպաստ ժեսթը «վերահաստատվող Ռուսական կայսրութեան» նկատմամբ հերթական, խորամանկ կերպով հորինված մանյովըն է հայ ազգայնական բուրժուազիայի: Այսպիսի չեզրակացութիւնն անշուշտ ճիշտ է, յետեւ նկատի առնենք, վոր Աբ. Ղազարյանը, լրացնելով Քաջազնունը, զարգացնում է մի ամբողջ ծրագիր, թե ինչպես խորհրդային Հայաստանը «աստիճանաբար» պետք է «առանձնացվի ընդհանուր խորհրդային շղթայից», վորպես ծայրամասային ազգային հանրապետութիւն: Լեզալացված թշնամու այդ խորամանկ ծրագրի քննութեանն է նվիրված մեր այս գրքուկի վերջին մասը:

Սրանք են (Ռուսաստան թե թշուրքիա, խորհուրդների դիրքերի ամրացում և այլն) այն հիմնական պատճառները, վորոնք դրդել են Քաջազնունուն և Ղազարյանին «ճանաչել» խորհրդային Հայաստանը: Իսկ վերին է այն հայտարարութիւնների նպատակը, թե «բոլշեւիկները Դաշնակցութեան ժառանգորդներն են» և այլն: Նպատակը մեկ է—համոզել միամիտ

մարդկանց, վոր այն բոլորը, ինչ առել է խորհրդային քաղաքականութեանը դաճակների ձեռնով ավերված Հայաստանում, «նախագծած է չեղել» նաեւ Դաճակցութիւնը, բայց չի կարողացել կենսագործել «սեփական ուժերով պալմանների—ուժերի յեւ միջոցների բացակայութեան»: Արշ. Ղազարյանը լուրջ տեսք ընդունելով ճշմունքն է համոզել ընթերցողին, վոր իրենց «շինարարութեան միտքաշուրջ մասշտաբի» պատճառն այն է, վոր դաշնակները «շրջապատված են չեղել թշնամական տարրերով (նրանց թշնամի ելին ժողովրդական զանգվածները. չլինի թե դրանք են «խանգարել» դաշնակներին կենսագործելու իրենց «վիթխարի» ծրագիրը Մ.) կտրված են չեղել արտաքին աշխարհից և զրկված հաղորդակցութեան ճանապարհներից, մինչդեռ բոլշեւիկներն—այս կողմից լիովին ապահովված են (եջ 28):

Այստեղ մեր աչքի առջեւ է Դաշնակցութեան մի հերթական քաղաքական շանտաժը, դաճակների անցյալ գործունեութիւնը արգաքանցելու լրբեքի մի փորձ,—մի փորձ ապացուցելու, վոր, «անցյալում է. է. Դաշնակցութիւնը հարկավոր էր Հայաստանի յեւ հաւ ժողովրդին» (Քաջազնունի, եջ 65), վոր նա, «պատկով կասաբեց իր պատմական առաքելութիւնը» վոր նա, բանից դուրս է գալիս, կմնա «հարգանքի ու յեղափոխութեան, սիրո յեւ պատգամների առարկա» (եջ 76, ընդգծ. մերն է Մ.¹):

¹) Մնում է միայն դարմանալ այն բանին, վոր ընկ. Ստանյանի առաջարկները գտնում են, թե Քաջազնունու դիրքը հանդիսանում է քաղաքական խոստովանութիւն և մեղադրական ակտ Դաշնակցութեան դեմ, իսկ ինքը Քաջազնունին շատ կտրական հայտարարում է. «Յես ունեմ այն հաստատ գիտակցութիւնը, թե այստր մտածում եմ—

Յեւ վստիգայացված հայ ազգայնականութիւնն առաջին փորձը չի արդարացնել Դաշնակցութեան անցյալ գործունեութիւնը: Հայաստանի Պետհրատը դեռ 1926թ. հրատարակել է սոցիալ-շովինիստ Յուլի Խանդադչանի «Ավետիս Անարոնյան» գիրքը, վորտեղ բառացի ասված է հետեւյալը.

«Յուր բոլոր բացասական կողմերով հայկական (այսինքն դաշնակցական. Մ.) շարժումը վերջ է վերջո պետք է համարել դրական (!) Առաջին անգամ հայ ժողովուրդը վտարի կանգնեց հանուր գաղափարի: (Յ. Խանդադչան, էջ 31 ընդծ. իջն է. Մ.):

Յեւ նման գրութիւնները մինչև ամենավերջին ժամանակներս առանց բայլեկիկական հակահարվածի չեն ֆնացել:

Բայց այնուամենայնիւ ռւս համար են այս հեքիաթները: Ո՞վ կհամարտա այս հերյուրանքին: Ո՞վ ում է պաշտում: Սմենավեխական իդեոլոգները հավանորեն «խճճել են իրենց կաթը»: Պաշտում է և հարգում է դաշնակներին հայ բուրժուազիան և... իրենք դաշնակները: Իսկ աշխատավոր զանգվածներն իրենց «հարգանքը» դեպի դաշնակներն արտահայտեցին,

խոսքը հիմնական մտածումի մասին և—ձիշտ այնպես, ինչպես մտածել եմ 1920 թ., 18-ին, 14-ին և իմ ամբողջ կյանքում... Յես չունեմ նոր պաշտամունք. չեմ կառուցել նոր կուռքեր, մնում եմ հավատարիմ իմ դավանած հին աստվածներին: Այն, վոր «նոր» է թվում քեզ, ինձ համար նույն հինն է. հնի շարունակութիւնն ու զարգացումը (1) Յեկեղեցին չեմ, վոր յես փոխում եմ այսօր, այլ միայն քահանան ու ժամկոչը, վոր յեկեղեցու բլրից սպառնալորներ են և ուրիշ վոշինշ (եջ 103, ընդգծ. մերն են. Մ.):

ինչպես հայտնի յե, նրանով, վոր... արտասահման վոնդեցին նրանց:

Հետո: Ո՞վ, ռւսինց և ինչ է ժառագել:

Հայաստանի կոմկուսակցութիւնը ժառանգել է դաշնակներէց՝ ավերված մի չերկիր և մուրացիկի դրութեան հասած աշխատավոր զանգվածներ. այս փաստ է: Նա ժառանգել է դաշնակներէց նաև ազգային անտոգոնիզմի մթնոլորտ. շովինիզմով և ռեակցիոն ազգային սահմանափակութեամբ վարակված ուղեղներ (վորոնց մի մասը մինչև որս դեռ չի թոթափել իրենից այդ ծանր բեռը): Սա չեւ փաստ է:

Գուցե դաշնակցական պոլիտիկանները, վորոնք կատարելութեամբ չուրացրել են հետաքննաց աշխատավոր զանգվածներին խաբելու և նրանց ազգային զգացմունքները շահագործելու կեղտոտ արհեստը, հույս ունեն փոշի փչել Հայաստանի աշխատավորութեան և նրա կոմունիստական ավանգարդի աչքերին թե «դուք արդեն քայլում եք միացյալ, թեկուզ Խորհրդային, բայց անկախ Հայաստան ստեղծելու ճանապարհով,—դե, ավելի արագ շարժվեցեք»¹⁾— և դրանով շեղել նրանց միջազգային սոցիալիստական հասարակութիւն կառուցելու աչն լայն ճանապարհից, վորով յոթ տարի չի հաղթականորեն ընթանում են Հայաստանի բանվորագյուղացիական զանգվածները

*
*
*

1 Խոսելով Խորհրդային Հայաստանի անկախութեան մասին՝ Քաջագունին ասում է. «Հայաստանը անկախ չէ: Այո, բայց մի մեծ քայլ է արել դեպի անկախութիւն և հետևյալ քայլն անելու համար պետք է ամբողջի արդեն նվաճած դիրքը (!) (եջ 92, ընդգծումները մերն են Մ.):

Միաբանելով այն բանում, վոր ներկա քաղաքական պայմաններում «անկախ և միացյալ Հայաստանի սրբազան սկզբունքը, հայ ժողովրդի այդ միակ (!) և դերագույն (!) նպատակը»¹⁾ հնարավոր և իրականացնել «միայն Սորհրդային Հայաստանի բազայի վրա՝ ուսական հզոր բաղուններին կռթնած», հայ ազգայնական սմենավելական այդ յերկու ամենահասուն իդեոլոգները—Հ. Քաջազնունին և Ա. Ղազարյանը—**արմատականացնել արածայնվում են, սակայն, նրանց յերկուսի համար էլ ընդհանուր այս նպատակի իրականացման ուղիների հարցում, իսկ սրա հետևանքով էլ հանգում են միանգամայն տարբեր չեղրակացությունների՝ Դաշնակցության գոյության և նրա այժմյան «առաքելության» ու հեռանկարների խնդրում:**

Վերն և այդ տարբերությունը:

Տարբերությունն այն է, վոր Քաջազնունին գտնում է, թե Տաճկահայաստանի հարցի վրա պետք է խաչ դնել և սրանից չեղրակացում և, վոր Դաշնակցությունը, վորն «անելիք չունի գաղութներում և տեղ չունի Հայաստանում իբրև որինական ուղղորդի», —պետք է վերջ դնի իր գոյությանը:

Բայց թող չկարծի ընթերցողը, ինչպես կարծեցին շատ շատերը, թե Քաջազնունին զրանով իսկ «համաձայն

¹⁾ Այսպես է ձևակերպում Դաշնակցության հիմնական քաղաքական գաղափարը դաշնակների յեղիպատական որդան «Հոստաբերը» (261, 1927 թ.), ի մի գումարելով դաշնակցության Յեղիպատի վերջին 15-րդ յերկրային համագումարի արդյունքները:

և պարփակվել» «արդեն գոյություն ունեցող հայ պետություն» սահմանների մեջ—Սորհրդային Հայաստանի ալտրավա սահմանների մեջ: Բնավ վնաս, նա, նախ և առաջ, պահանջում է գոյություն ունեցող Սորհրդային Հանրապետությունների Միության փոխարեն «այնպիսի ֆեդերացիա, վորի մեջ գաճակից պետությունները մեկն են գաճակից կամ մեկն (!) չեղ հավասար իրավունքներով: Այժմյան Ռուսական (այսինքն Միությունական Մ.) ֆեդերացիան այդպես չի կազմակերպված»: Դժվար չէ հասկանալ, թե ինչ է ուղում սմենավելականը: Նա ուղում է, վոր Հայաստանը մտնի Ս.Ս.Հ.Մ մեջ անմիջական կերպով, իբրև «դաշնակից պետություն»: Այս և բոլոր այն նացիոնալ-դեմոկրատների պահանջը, վորոնք հաշովել են իրենց հայրենիքի» Սորհրդայինացման փաստի հետ, ինչպես հայտնի չէ, այս ելին պահանջում իր ժամանակ վրացական ուղիոնիստները:

Բայց այդ «դեռ վոչինչ». ուղղափառ շովինիստ Հովհ. Քաջազնունին, վորի լոգունդի («Դաշնակցությունն անելիք չունի այլևս») արտաքին գրավությունը կուրացրել և շատերին, հետևողական կերպով զարգացնում է մի ամբողջ ծրագիր այն մասին, թե ինչպես պետք է հավաքել «ազգի (հայ. Մ.) այն բոլոր հատվածները—գլխավորապես գյուղացիական, —վոր գեցվում են հաճապետության գրացի վրաստանում չեղ Ս.Ս.Հ.Մ-ում: Սրանց վրա պիտի հեցվի ու սրանց համար հաստատվի հայ պետությունը» (!) (էջ 59, ընդգծումն իմն և Մ.):

Քաջազնունին կոնկրետացնում է իր ծրագիրը: Նա ամենայն կտրականությամբ հայտարարում է.

«Նա (Հայաստանը. Մ.) չի կարող պար-
փակվել չերեք ու կես գավառի մեջ (Յերեվան,
Նոր Բայազետ, Եջմիածին ու Շիրակի կեսը):
Յեթե հրաժարվի Ախալքալաքից հոգուտ վրացի-
ների, Լոռին այնուամենայնիվ պիտի պահանջի
իրան. չեթե հրաժարվի Լեռնային Ղարաբաղից
հոգուտ Ադրբեջանի, Շարուրն ու Նախիջևանն
այնուամենայնիվ պիտի պահանջի իրան» (Եջ 100):

Այսպես ե գրել չհանդիպելով վոչ մի առարկու-
թյան, ամենավիսակա՛ն-իդեոլոգը: Առեք ուզածդ դաշ-
նակցական լրագրի համարը և դուք այնտեղ անպատ-
ճառկոտներ «Հայկական հողերի հավաքման» լրդունգը
և պահանջ՝ «վերադարձնել Գանձակը, Ղարաբաղը, Ա-
խալքալակը, Շարուրը, Նախիջևանը և Բորչալուն»: Պրոկտորական հեղափոխության ակտով դաշնակցա-
կան թերթուկների այդ շովինիստական թուշը Սոր-
հըրդային չերկրում որենքից դուրս ե դրված:

Սակայն, մանեվրող հայ բուրժուազիան—ձիշտ
ե, այլ ձևով և այլ անվան տակ—շարունակում ե իր
ամենավիսակա՛ն իդեոլոգների բերանով թունավորել
աշխատավորական զանգվածների գիտակցությունը
նման կենդանաբանական շովինիցմով:

Բայց,— կհարցնի մեզ ընթերցողը,— ինչո՞ւ Հովհ.
Քաջազնունին այնուամենայնիվ հայտարարեց թե՛
«Հ. Հ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս» ինչ
բովանդակությունե դնում նա իր այդ լրդունգի մեջ:
Այս հարցին մենք կպատասխանենք Քաջազնունու
խոսքերով:

«Մեր պատմական միսսիան (!) ավարտված
ե. մեր կուսակցությունն արել և արդեն իր

աւերող անելիքը ու սպառել ե իրան...» (Եջ 73):

«Թյուրքահայաստան չկա այլևս... ընդհա-
նուր ատմամբ՝ դրսեցի հայերը—պետական տարմ
չեն այսորվա Հայաստանի համար (Եջ 59)...

«Հայաստանի հանրապետությունը՝ իրրե մի
ինքնավար նահանգ, կցված ե Սորհրդային Ռու-
սաստանին. բաժանել մեր պետությունը Ռու-
սաստանից չենք կարող, չեթե նուշխակ ցան-
կանանք, և չպիտի ցանկանանք, չեթե նուշխակ
կարողանանք: Կուսակցությունը պարտված ե
ու կորցրած իր հեղինակությունը, չերկրից
դուրս ե արված, չի կարող վերագառնալ **սուհ**
յեվ լիհեյ ուրիհակա՛ն ոպոգիցիա յիակ գա-
ղութներում գործ հունի անելու» (Եջ 74):

«...Նա (Դաշնակցությունը. Մ.) վերջ պիտի
դնի իր գոյությանը: Պիտի անե այդ՝ նուշխակ
իր սեփական անցյալը, իր **աճուհ** ու պատի-
վը (!) փրկելու համար» (Եջ 79, ընդգծումները
մերն են. Մ.):

Ահա թե ինչու այլևս անելիք չունի հայ Փա-
շիստները կուսակցությունը, վորի «անվան և պատվի
փրկության» գործին մինչեվ վերջին բոպեն հավատա-
րիմ ե մնացել Հովհ. Քաջազնունին:

Պարզ ե, վոր դասակարգային պայքարի չերկաթե
որենքների տեսակետով Քաջազնունու այդ թեզիսը
քննադատություն չի գիմանում, վորովհետե վորեե
դասակարգի քաղաքական կուսակցությունը չերեք
չի զիջել և չի զիջի իր զիբերը՝ ինքնապանության
դիմելով:

Այսպես ե դասակարգային պայքարի տրամա-
բանությունը...

Յեւ Պաշնակցութիւնը—«հալ բուրժուազիայի այդ հարազատ զավակը» (Ս. Շահումյան)—չեր կարող, ի հարկե, համաձայնել և չհամաձայնեց առանց վճռական և վերջին մարտի՝ կամովին զիջել իր, ճիշտ և անչափ յերերուն, զիրքերը։ Նա չեր կարող այդ անել, վերոմէտե տասնյակ տարիների ընթացքում լինելով միջազգային և հալ բուրժուազիայի ձեռքի գործիքը Մերձավոր Արեւելքում, նա այսոր ավելի, քան չերբեք, պետք է իր տերերին։ Փաշիստական բաշիրողունների այդ հալական ջոկատը հարկավոր է Ֆերանսիային՝ նրա իմպերիալիստական գործողութիւնների համար Սիրիայում, Անգլիային՝ Յեզիպոստում և Թուրքիայում, Իտալիային՝ Պարսկաստանում և վողջ կապիտալիստական բանակին՝ հանդեպ Սորհրդային Միութեան։

Պաշնակցութիւնը ճիշդ է թափում և դեռ թափելու չե՝ մթազնել արտասահմանի հալ աշխատավորութեան դասակարգային գիտակցութիւնը և վաճառել նրանց կյանքերը՝ հոգուտ իր տերերի—Յեւրոպայի և Ամերիկայի իմպերիալիստների։ Սակայն նրա զիրքերը գաղութներում, ինչպէս հայտնի չէ, տարե տարու վրա ավելի չերերուն են դառնում (այս բանը չեն թազցնում նաև մի քանի դաշնակցական թերթեր) — հալ բանվորներն ազատագրվում են նրա (Պաշնակցութեան) ազդեցութիւնից և ձուլվում են կապիտալիստական չերկրների մարտնչող պրոլետարիատի ընդհանուր զորասլուններին։

Այս բոլորից հետո պարզ է, թե Պաշնակցութեան համար ինչու չէ անընդունելի Քաջազնունու գեղատոմսը կուսակցութեան ինքնասպանութեան մա-

սին՝ հանուն նրա «փառահեղ անվան ու պատվի փրկութեան» — և միանգամայն բնական է այն զարուկթն ու ցասումը, վորին արժանացավ այդ թեզիսը պարոնայք Վրացյանների, Սատիսոֆների ու Ջամալյանների կողմից։ Սակայն, Հովհ. Քաջազնունին առաջարկել է Պաշնակցութեան ինքնասպանութեան լողունը, հաստատապես հավատալով հանդերձ, վոր՝

«Պաշնակցութեան անունն իսկ կարող է վերանայ, մոռացվել իսպառ, բայց այն **ԸՄՐՈՍ ՎՈՂՅԵ, ազատագրվելու** այն տենչը, (!) վոր ծրնունդ է տվել Պաշնակցութեան և վոր իսկական Պաշնակցութիւնն է—չին մեռնի։ Կուսակցութիւնը—ավելի ճիշտ՝ ալսորվա կազմակերպութիւնը—կարող է կազմալուծվել, բայց **զաղափարն ու գործը կմնան կենդանի**։

Վոչ միայն կենդանի կմնան, այլ և մի նոր կենսունակութիւն կստանան» (!) (Էջ 77, ընդգրծումներն իմն են. Մ.)։

Ի հարկե, այդ հարցերին վիճակված չի իրականանալ, ի հարկե, «մարտնչող հայութեան ըմբոստ վողին» չի գիմանալու ժողովրդական զանգվածների գիտակցութեան մեջ ավելի ու ավելի աճող ինտերնացիոնալիզմին։

Իսկ ի՞նչ է Արշ. Ղազարյանի կարծիքը, ինչպէս մենք արդեն վերը մատնանշել ենք, նա արմատապես **սառսալանվում է Քաջազնունու հետ հատկապես այս հիմնական հարցում**։

Հակառակ Քաջազնունու, այս պարունը գտնում է, վոր «**Է. Է. Դաւենակցութիւնն ալսոր առավել, քան յերբեք, անելիք ունի**» (!!) (Էջ 6, ընդգծումը մերն է. Մ.)։

Ինչպէս յի հանդիմանողիս յեղբակացութեան Արշ. Ղազարյանը, — կհարցնի ընթերցողը: Բանն այն է, վոր նա վոչ մի կերպ չի ուզում համաձայնել «ազգահավաքման» այն մասշտաբի հետ (անգրկովկասյան հայութեան), վոր առաջարկում է Քաջազնունին: Հակառակ Քաջազնունու, վորը գտնում է, թե «գրսեցի հայերը պետական տարրը չեն աշխարհաւ Հայաստանի համար», Արշ. Ղազարյանն ամենայն կարեւորութեամբ հայտարարում է, վոր այսօր կա՝

«գազարկանական խնդիրը հայ ժողովրդի համար մահու յեղ կենաց խնդիր է» (եջ 6), վոր հատկապես՝ «սովետներէ որոք է, վոր քուստահայութեան ու ռուսահայութեանը պիտի ի մի խմբվեն ու ձուլվեն «մայր հայրենիքում» (եջ 11, ընդգծումը մերն է. Մ.):

Ինչպէս տեսնում ենք, Արշ. Ղազարյանի վերցրած «մասշտաբը» շատ ավելի մեծ է, քան Քաջազնունունը:

Բայց Արշ. Ղազարյանն ինչպէս է մտածում կենսագործել «Միացյալ Հայաստանի» ստեղծման այդ ավանդուրդատական ծրագիրը, — կհարցնի ընթերցողը: Ինչ կոնկրետ միջոցներ է «առաջարկում ձեռք առնել»:

Նախ և առաջ՝ «ազգահավաքման» մասին. ո՞վ պիտի զբաղվի այդ «աղնիկ» գործով:

«Այս խնդիրը Հ. Հ. Դաւանակցութեանը միայն կարող է աւմաստպես (!) վճռել: Նա կարող է ցրել զբաղ հայութեանը մայր հայրենիք կենտրոնացնել» (եջ 6):

«Դաւանակցութեանը, — շարունակում է Արշ.

Ղազարյանը, ունի անցյալի խոշոր փորձ (!) նման խնդիրներին ընթացք տալու: Իսկ կու՞ն կազմակերպութեան զաղութներում (հայկական Մ.) միայն և միայն Դաւանակցութեանն ունի»:

Դաւանակցութեան փորձը «ազգահավաքման» գործում հայտնի յի Անգրկովկասի բանվորներին և գյուղացիներին. դա այսպէս կոչված «հայկական հարցի» պատմութեան արշունոտ եջն է, դա հայ-թրքական ընդհարումների զոհերի վիճակագրութեան է, — ընդհարումների, վորոնք արդունք կլին հայ բուրժուազիայի և նրա կուսակցութեան՝ Դաւանակցութեան պատկերացումների:

Մի բոլոր յենթադրենք, վոր մնան գործերում փորձված Դաւանակցութեանը հավաքեց ամբողջ աշխարհում ցրված «Հայ ազգը»:

Ինչպէս և վորտեղ է մտածում ու ծրագրում տեղավորել այդ ավելի քան կես միլիոնանոց բազմութեանը Արշ. Ղազարյանը:

Ո՞ր, Ղազարյանը հեռատես է, — նա մշակել է մի ամբողջ ծրագիր, թե ինչպէս աստիճանաբար պետք է «չորր Սովետական Ռուսաստանի ուժով» Խորհրդային Հայաստանին կցել «պատմականորեն և իրավապես նրան» պատկանող «թյուրքիայի հայկական վիլայեթները»: Նա խորհուրդ է տալիս «Մերելի Ալեքսանդրը Իվանիչ» Խառնուկին և «Դաւանակցութեան 10-րդ համագումարին» չհուսահատվի:

«Այն լուրջութեանը, վոր այդ խնդրի առթիվ պահում է Սովետական Հայաստանն ու Սովետական Միութեանը, թող չհուսահատեցնի մեզ, վորովհետեւ կես միլիոնից ավելի ազգատուներ

ու թափառաշրջիկ հայութիւնը, ինչպէս և հարյուր հազարավոր անտիրական վորքեր, վնորոք պարզ զոհեր են թշուրք բռնապետութեան, չե՞ն կարող Սովետների կողմից անուշագրուքյան մասնով մեծապէս» (Էջ 13, ընդգծումները մերն են. Մ.):

Մենք այստեղ չենք պատասխանի մինչև ուղն ու ծուծը շովինիստ Ղազարյանին այն հարցի առթիւ, թե ում հանցանքն է, վոր հարյուր հազարավոր աշխատավոր հայեր թափառում են աշխարհիս չորս կողմերում, վորովհետև յուրաքանչյուր ազնիւ աշխատավորի համար անվիճելի ճշմարտութուն է, վոր վոչ թշուրք ժողովուրդը և վոչ ել հայ աշխատավորութունն է մեղավոր դրանում: «Դա նւրբանց դժբախտութունն է, բայց վոչ հանցանքը», — ասում է ընկ. Շահումյանը: Դրանում մեղավոր են արևմտաեվրոպական իմպերիալիստները և առաջին հերթին նրանց հավատարիմ շուն-արյունոտ Դաշնակցութունը: Սակայն, մի կողմ թողնենք այդ. լսենք, թե հետո ինչ է ասում սմեռավեխական իդեոլոգը:

Նա «հիմնավորում է» իր հայտարարութունը, թե ինչու ԽՍՀՄ «առաջիմ» չի դնում թշուրքիայի հաշկական վիլայեթների հարցը Նա հարց է տալիս, թե ինչո՞ւ Չեչերինը, վոր Լոդանի կոնֆիրենցիայում առաջարկեց Դոնի ավազանում տեղավորել 50 հազար թշուրքահայեր, չհայտարարեց, թե՞ «գաղթականական հայերը կտեղավորեն Ալաշկերտի, Բասենի, Վանի և առհասարակ Ռուսահայաստանի հարակից լքյալ հողամասերում, վորոնք պայմականորեն և իավորեն թշուրքահայերին են պատկանում»: Յեւ վիկուլն և ի՞նչ պատասխանում է.

«Այդ չարվեց, վորովհետև ժամանակը չէ» (Էջ 13, ընդգծումը հեղինակին է. Մ.): «Նախքան նման հողամասերի խնդիր հարուցելը, — շարունակում է Ա. Ղազարյանը, — կան ավելի մոտալուտ ու շտապ վճռելի խնդիրներ — Սուրմավի, Ղարսի Գահագի, Արդահանի շրջանի»... (Էջ 13 — 14, ընդգծումն իմն է. Մ.): Արշ. Ղազարյանը բացատրում է պարոն Խառնիսովին, վոր՝

«Սրա համար փոքր ինչ համբերութուն է պետք, վորպեսզի մեծ պատերազմի (1914 թ.) հետևանքով առաջացած լարումներն ու իրավական խնդիրները պարզվեն կենտրոնական պետութունների, ինչպէս և Բալկան պետութունների մեջ և, վերջնականապէս լուծվի Սովետական Միութեան ճանաչման ակտը: Մինչ այդ կպարզվի նաև Քեմալական Տանկաուսանի ցասկասկածելի ու լեկզբի գիւրքը (!) (Էջ 17):

Այսպէս եր գրում Ար. Ղազարյանը, չհանդիպելով վոչ մի հակահարվածի: Ավելորդ է, իհարկ է, ապացուցել, վոր նացիոնալիստ-ավանտյուրիստի այս հուլիսներին վիճակված չէ իրականաւոր, վոր կովացնել Խորհրդային յերկիրը հանրապետական թշուրքիայի հետ Ղազարյանին և նրա լիզբայրակիցներին չի հաջողվի, ինչպէս և չի հաջողվի գլուխ բերել «միացյալ, թեկուզ Խորհրդային, բայց անկախ Հայաստան» ստեղծելու ստոր ավանտյուրիստական ծրագրերը: Իսկ սա, ինչպէս հայտնի չէ, առաջին փորձը չէ աշկարատեսքով ազիտացիա մղելու հողուտ Խորհրդ. Հայաստանի սահմանների ընդարձակման՝ ի հաշիւ Տաճկաստանին պատկանող հողերի:

«Ազատախոհ հայութեան» բաժնական աշքի ընկ-
նող իգեւորոգ նախկին եսեռ Գր. Չորսարը Հայաստա-
նի խորհուրդների գեռես 2-րդ համագումարում բա-
յտհայտ հայտարարել եւ, վոր «մեր (հայ. Մ.) ժողո-
վըրդի գոյութեան չերկաթե որենքները պահանջում են
ըճգարձակել մեր յերկրի սահմանները», վորովհետեւ
«աշխարհիո չորս դին ցաք ու ցրիւ չեղած հայ աշ-
խատաւորութունը մի անկունն եւ վործնում իր գո-
յութեան համար, եւ խորհրդային Հայաստանը դարձել
եւ այդ Ավետայց աշխարհը»: Յիւլ ախուհետեւ՝ «Մենք
(?) աւելոչում ենք Տաճկաստանի հեղափոխական կա-
սաւարութեան քաղաքական խղճին եւ իմաստու-
թեանը»¹⁾

Կրկնում ենք, նման դատողութիւնները Ղարաի
եւ Արդահանի, Սուրմալի եւ Ալաշկերտի մասին բաժնա-
կան տարածված են այսպես կոչված ազատախոհ հայ
նացիոնալիստական ինտելիգենցիայի շրջաններում:
Ընկ. Որջոնիկիձեն գեռես չերկու տարի սրանից ա-
ռաջ ճիշտ եւ մատնանշել բայլիկիկան կրակը մեր
թշնամի ուժերի նման ագիտացիայի դեմ կենտրոնաց-
նելու անհրաժեշտութիւնը.

«Նրանք սպեկուլյացիայի առարկա չեն
գործնում Հայաստանի աներեւակայիլ սակավա-
հողութիւնը եւ միամիտ մարդկանց հայացքներն
ուզողում են թշուրքական սահմանի աչն կողմը:
Այդ ագիտացիան չի կարող հաջողութիւն չու-

¹⁾ Տես՝ Հայաստանի խորհուրդների 2-րդ համագումարի
սղագիր հաշիւաւորութիւնը, էջեր 71, 72, 73. ընդգծումն ամենու-
րեք մերն եւ Մ.:

նենալ հայերի վորոշ մասի շրջանում, մանա-
վանդ նախկին թշուրքահայերի շրջանում»¹⁾
Սակայն, դառնանք Արշ. Ղաղարչանին:

Այդ պարոնը չի բաժնականանում հայ ազգի հա-
վաքումով եւ Սոց. Խորհրդ. Հայաստանի սահմանները
մինչեւ բուն Կիլիկիան ընդլայնելով: Վճշ, այդ բանը
դա՛նակ ավանտյուրիստի համար քիչ եւ՝ Նա այժմ
իսկ «ուրվագծում եւ» աչն ուղիները եւ նույնիսկ ժամ
կետը, չերբ կարելի կլինի «անկախ Խորհրդային Հա-
յաստան» հռչակել.

«Յերբ Սովետական Միութիւնը միջազգա-
չին ուժ դառնա, դադարեն նրան հասնող ար-
տաքին հարվածները, ներքնապես կազդուրվի,
այճ ժամանակ կովկասյան ժողովուրդները ճո-
րից հայաբաբելու չեճ աճկաթ սովեթական հաճ-
րապետութիւն» (!!) (էջ 22):

Աչն ժամանակ կզրվի նաեւ «անկախ Խոր-
հրդային Հայաստանի» հարցը:

Այս եւ նացիոնալ-դեմոկրատիկ ավտոնոմիայի
ջատագով Ղաղարչանի ավանտյուրիստական ծրագիրը:
Բայց շարունակենք լեզուացված նացիոնալ—ա-
վանտյուրիզմի այս գոհարները վերլուծութիւնը:

Խոսելով Դաշնակցութեան ինքնառաջանութեան
վերաբերյալ Հովհ. Քաջազնունու առաջադրած թեզի-
սի մասին, Արշ. Ղաղարչանն ամենայն կտրականու-
թեամբ հայտարարում եւ.

¹⁾ Տես՝ 1926 թ. մայիսի Անդրկովկ. Յերկր. կուսխորհրդ-
դակցութեան սղագիր հաշիւաւորութիւնը, էջ 146 (ընկ. Որջո-
նիկիձեյի յելույթը):

«Յեթե իրոք բոլշևիկյան կարգերում հայ ժողովուրդը պահելու չե իր անհատականությունն ու բոլոր տվյալներն ունի ազատորեն զարգացնելու իր ցեղային առանձնահատկությունները (!) իր իսկ հայրենիքում, չեթե ներքին կյանքի մեջ ել հեռու չե մնալու ամեն տեսակի շահագործումներից ու կեղեքումներից, չեթե վերացած են ընդմիջող դասակարգային ճնշումները (!), չեթե պատկանելու չե հայ ժողովրդին (!) և իսկական ժողովրդագրությունները ե իշխող հանդիսանալու, ուրիմն ել ի՞նչ խոսք կարող ե լինել ինքնապատկանության (ավելի ճիշտ՝ ինքնասպանության. Մ.) մասին: Մեր ողորդն ել հենց այդ ե յեղած 35 տարիներից ի վեր» (եջ 12, ընդգծումները, բացի վերջինից, մերն են. Մ.):

«Յերկիրը պատկանելու չե հայ ժողովրդին»: Ինչ ե այս, չեթե վոչ պրոլետարիատի թշնամի դասակարգի մի արյունոտ նախագիծ՝ դուրս քշելու «ինքնորեն խորհրդային Հայաստանից» այստեղ ապրող թուրքերին, քրդերին և այլ ազգային փոքրամասնություններին, ինչպես այդ անում ելին իր ժամանակ դաշնակ քյասարախչիները: Կամ «հայերի ցեղային առանձնահատկությունները» զարգացման և «հայ ժողովրդի անըստականությունը» պահպանման պահանջը: Չե վոր այստեղ բացակայում ե նույնիսկ այն խորամանկությունը, վորի մասին գրում եր Ստ. Շահումյանը: Սա պարզապես մեր թշնամի դասակարգի ձեռնարկած մի աշկարա գրոհ ե պրոլետարական դիկտատուրայի և բոլշևիկյան ինտերնացիոնալիզմի հիմքերի վրա:

Բայց Ա. Ղադարյանն ավելի առաջ ե գնում:

«Հայ ազգի հովաքում» (Դաշնակցության միջոցով) և «Խորհրդային Հայաստանի սահմանների ընդլայնման ընդհանուր գործը (Խորհրդային Միության միջոցով) գլուխ բերելու համար նա առաջարկում ե հետևյալ կազմակերպչական ստրատեգիան (կառուցվածքը):

«Վորպեսզի կարողանանք գաղթականություն հարցը հայրենիքի շահերի համապատասխան վճել, անհրաժեշտ ե Խորհրդային Հայաստանի չեվ 2. 2. Դաշնակցության միջեվ ներքին համաձայնությունը (!) (եջ 18—19, ընդգծումը ե):

Յերեք տարի առանց հակահարվածի չե մնացել, Խորհրդ. Սոց. Հայաստանի և հայ ֆաշիստների կուսակցության միջև «կոմպրոմիս» ստեղծելու այս առաջարկը:

Սակայն մեծ աչքերին եր ուղում փոշի փչել լավիշ դաշնակցական տակտիկը՝ նման առաջարկություններ անելով: Ասում ենք «աչքերին փոշի փչել», վորովհետև չե վոր այստեղ ես դասակարգային պայքարի որոնքներն իրենց ուժի մեջ են. չեթե միւսանց թշնամի դասակարգեր չեն կարող ներքին գաշիք կնքել: Հասկացավ այս բանը նաև Դաշնակցության X համագումարը, վորը մեծեց ամենավեճական Արշ. Ղադարյանի այդ կոչը և փոխեց դաշնակների IX համագումարի բռնած դիրքը դեպի Խորհրդ. Հայաստանը. «լույս ռապորտիցիա» լինելու փոխարեն նա վորոշեց բռնել դասակարգային հստակ արտահայտված դիրք, այն ե մղել:

«Մեհառ զաղափարական կոթիվ հանդես
Սովետական գիկսառուրայի յեվ առխարհակա-
լուրյան»¹⁾

Իսկ այժմ, չիրը իմպերիալիստական բանակը
ԽՍՀՄ հանդես բռնել և ծայրահեղ ագրեսիվ դիրք,
միշտ «որվա կուրսով» ապրող Դաշնակցութունը տա-
լիս և նոր մարտական լողուններ:

«Հարկավոր և արմատավորել բոլորի գի-
տակցության մեջ Խորհրդային Խեխառուրյան
հապարման անհրաժեհությունը»²⁾

Այս և դասակարգային պայքարի արամարանու-
թյունը:

* *

Վերջում անհրաժեշտ ենք համարում կանգ առ-
նել մեր կարծիքով շատ կարևոր մի խնդրի վրա:
Մենք նկատի ունենք այն հանգամանքը, վոր մեր
մաժուրը Հայաստանում բալլեիկյան հակահարված չի
տվել սոննավեխական գրություններին: Ավելին. մեր
լրագրերի եջերում չերբեմն ապրդել են այնպիսի մըտ-
քեր, վորոնք որչեկտիվորեն թեվավորում ելին սոն-
նավեխականության ուղին բռնող դաշնակներին և
նրանց հույս ելին ներշնչում, վոր Խորհրդային Հա-
հաստանը բաղա ունենալով նույնպիս «կարելի չի
աստիճանաբար ստեղծել միացյալ Հայաստան»:

Բերենք մի քանի փաստեր.

«Խորհրդային Հայաստանի» 1922 թ. № 72-ում
ընկ. Աշոտ Հովհաննիսյանը, խոսելով Հայաստանի

¹⁾ Տես՝ Դաշնակցության X համագումարի կոչը. «ДНН»
լրագիր, № 198, 1925 թ.

²⁾ Տես՝ «Դրոշակ», 3 դեկտ. 1927 թ.

պայմաններում կոմկուսակցության ունեցած նվաճուր-
ների մասին, գրում ե, թե նա (կոմկուսը) «կարողացավ
միաժամանակ քաղաքական ուժ և ազդեցութուն
նվաճել նաև ազգային կյանքի եեղ սրբանակներում»
(!!), (ընդգծումը մերն ե. Մ): Բանն ինչո՞ւն ե: Ի՞նչ
նեղ շրջանակներ, ի՞նչ «ազգային կյանքի» մասին և
խոսում ինտերնացիոնալ բալլեիկյան կուսակցության
որդանի եջերում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը:

Կամ թե, որինակ, այն հայտնի տեսությունը,
վոր իբր Դաշնակցությունը մանր-բուրժուական կու-
սակցութուն ե: Սո. Շահումյանը աներկմտելի կեր-
պով Դաշնակցությունն անվանել և «բուրժուազիայի
ռազմատենչ կուսակցություն»: Բայց, չնայած դրան,
մեղանում—Հայաստանում—մինչև վերջին ժամանակ-
ներս շարունակվում ելին «գիսկուսիոն կարգով»
ապագրվել հողվածներ, վորոնք «մարքսիստորեն ա-
պացուցում ելին», թե Դաշնակցությունը՝

«վորպես դասակարգային կուսակցություն՝
կովկասահայ մահը-բուրժուազիայի արտա-
հայտիչն ե»¹⁾

Բայց այդ «դեռ վոչինչ»: Հետեղական լինելով,
Ա. Հովհաննիսյանը հայտարարում ե, վոր՝

«Դաշնակցությունը դասակարգային չե.
(ընդգծումը հեղինակինն ե— Մ) իր իղեո-
լոգիայով: Նրա իգեոլոգիան ձեվակերպ-
վեց վորպես ապագասակարգային ցացիո-
նալիզմ» (!!!):

(«Նորք», եջ 168, ընդգծումը մերն ե. Մ):

¹⁾ Տես՝ Ա. Հովհաննիսյանի հողվածը՝ «Դաշնակցության
սոցիալական ծագումը», «Նորք», 1928 թ. № 1 և Մամբրե Գարա-
դաշի հողվածը «Կամուխիստ» ամսագրի 1928 թ. № 1-ում.

Հիմնական - Երևան

Այսպես մարքսիզմի անվան տակ քարոզվում են հակամարքսիստական տեսություններ աշխատավորական զանգվածների դահլիճ հալ ֆաշիստների կուսակցության «ապագասակարգային նացիոնալիզմի» և «անդասակարգային իդեոլոգիայի» մասին: Մինչև այժմ մեզ հայտնի չեր մի «տեղակի» նացիոնալիզմ—կապիտալիստների դասակարգի նացիոնալիզմը, վերջով թունավորում էլին զանգվածների գիտակցությունը: «Պրոլետարական նացիոնալիզմ» և «ապագասակարգային իդեոլոգիայի» տեսությունը Լենինը չի ավանդել կոմ. կուսակցությանը:

Բայց ի՞նչ կապ ունի այս բոլորը Քաջագնդունու և Ղազարյանի հետ, ինչո՞ւ չեն բերվում այդ սրինակները, — կհարցնի ընթերցողը:

Կապ կա և շատ սերտ կապ: Ինչպես հայտնի չի, Դաշնակցության մանր-բուրժուականությունը տեսությունը համեմատաբար հին տեսություն է: Այդ տեսությունը Ա. Հովհաննիսյանը զարգացրել և գեղես 1922—23 թ.թ., ¹⁾ յերբ մոտավորապես սկսվեց ձևավորվել հայկական ամենավերսականությունը: Այդ տեսակետի կապը ամենավերսականության հետ ²⁾ մինք ցույց կտանք քաղվածքներով Հովհ. Քաջագնդունու գրքուկից.

¹⁾ Տե՛ս Ա. Հովհաննիսյանի հոդվածը «Նորք» հանդիսի № 3-ում (1923 թ.):

²⁾ Մենք չենք խոսում այստեղ այն որդանական կապի մասին, վոր ունի այդ տեսությունը հայկական ուղեցիֆիզմի և նրա առաքյալ Դ. Անանունի հետ: Այս հարցով հետաքրքրվողներին հանձնարարում ենք ընկ. Գ. Վանանդեցու արժեքավոր հոդվածը՝ «Դաշնակցության մանր-բուրժուականության թեորիայի քաղաքական հետևանքները» վերնագրով, գեղեցիկ «Պրոլետ. Հայրաբանի» 1928 թ. № 94-ում:

«Մի մոռանաք, վոր բոլշևիկների աչքում մենք մահր-ֆաղհեհիական (մահր-բուրժուական) կուսակցություն ենք—մի բան, վոր իմ կարծիքով վոչ առաջ է, վոչ էլ հեռու չե նեմարտաքյունից, չիթե հաշվի առնելու լինենք վոչ թե մեր ծրագիրն ու անհատ ղեկավարների աշխարհայեցողությունը, այլ կուսակցության իրական կազմը և նրա հավաքական մտայնությունը»:

(Եջ 64, ընդգծումները մերն են. Մ):

Այսպես և համաձայնում «բալշևիկների կարծիքին» ամենավերսական Քաջագնդունին: Ավելին. զինվելով Յերևանի «Նորքերի» քաջալերանքով, Հովհ. Քաջագնդունին հարձակման է անցնում: Նա զայրանում է այն բալշևիկների դեմ, ովքեր գահում են, վոր «միայն բուրժուազիայի վարձկանները, ավազակները, կողոպտիչները և ամեն չերանդի ավանտյուրիստներն են կազմում Դաշնակցությունը». այդպիսի բալշևիկներին նա .. հիմարներ է անվանում:

Բայց սա հարցի մի կողմն է: Դաշնակցության մանր-բուրժուականության տեսությունն անի նաև մեկ ուրիշ, քաղաքական տեսակետով ավելի վտանգավոր, կողմ:

Հայտնի չե, վոր մեր կուսակցությունը մանր-բուրժուազիայի նկատմամբ չերեք չի բռնել ագրեսիվ դիրք: Ընդհակառակը, լենինիզմի հիմնական սկզբունքներից մեկը՝ «գյուղացիական չեղրվում կատարված պրոլետարական հեղափոխության հարցում հանդիսանում է հետևյալը. նվաճել և չեթարկել պրոլետարիատին ու նրա խնդիր-

ներին մանր բուրժուական զանգվածները և առաջին հերթին՝ գյուղացիությունը:

Այս պատճառով ասել, թե Դաշնակցությունը մանր-բուրժուական է, նշանակում է՝

ա) դատապարտել այն անխնա կռիվը, վոր տասնյակ տարիների ընթացքում մղել է բայլընդմը այդ կուսակցության դեմ:

բ) գտնել, վոր Դաշնակցության դեմ չպետք է կռվել նաև այսօր, վոր նրա հետ հարկավոր է կենքի քաղաքական դաշինք, նրան պետք է դրավել խորհրդային իշխան. կողմը, — վորովհետև Լենինը կռակել է մեզ ամուր պահել դաշինքը մանր-բուրժուական չին հետ (նրա հիմնական զանգվածը — գյուղացիությունն է), իսկ Դաշնակցությունը նրա արտահայտիչն է:

Այսպիսի յեղրակացություն պետք է հանդիսանան վորք, ով Դաշնակցությունը մանր-բուրժուական կուսակցություն է համարում:

Ընթերցողն անշուշտ հիշում է, վոր Արշ. Ղաղարյանն աներկմաևի կերպով առաջարկում է (զրա մասին մենք արդեն խոսել ենք վերը)՝ դաշինք խորհ. Հայաստանի և Դաշնակցություն կուսակցության միջև: Ահավասիկ նման առաջարկների յեն նպատակում «մարքսիստական դատողությունները» դաշնակների մանր-բուրժուականության մասին, վորոնց «ազգային կյանքի» հենց այդպիսի «նեղ շրջանակներ» են հարկավոր:

Յեվ մի որինակի «Սորհրդ. Հայաստանի» 1928 թ. № 89-ում գետեղված է մի հոդված, վորտեղ զըրվատվում է — գիտեք ո՞վ — Դաշնակցությունը կուսակ-

ցության հիմնագիր Քրիստափոր Միքայելյանը¹⁾: Սա խախտողություն է, բայց փոստ է: Դուք գուցե չեք հավատում, թե սա ճիշտ է, ընթերցող: Յեթե այդպես է, մենք քաղվածքներ կբերենք այդ հոդվածից:

«Առումով գլխով, դուրեկան, վճռական և խելացի ղեմքով ու ակնոցներով, վորոնց տակից նայում ելին չերկու խոշոր և դարնան չերկնքի պես պարզ աչքեր: Այդ աչքերում արտացոլվում էր կամքի բացառիկ ուժ և միաժամանակ՝ արտասովոր բարություն: Դա — Քրիստափոր Միքայելյանն էր»:

Այսպիսի փարթամ ու բանաստեղծական վոճով է սկսվում հոդվածը:

Ապա գալիս են հետևյալ տողերը.

«Մեծ մարդասպան Արդուլ Համիդի ռեժիմի լծի տակ տնքացող տաճկահայերի ճակատագիրը — ահա այն խնդիրը, վորի լուծման շուրջն ելին դառնում նրա բոլոր մտքերն ու բաղձանքները, նրա բոլոր մտորումներն ու հույսերը»:

«Նա դարձել էր համոզված ժողովրդական և ժողովրդասեր:

Յեվ այդ սերը նա վճռել էր նվիրել եւ (1) ժողովուրդին»:

Վերջապես՝

1) Ի դեպ, Քրիստափոր Միքայելյանի ժողովրդականացման տառի վորձը չե այդ: Նման վորձ արել է նաև Գ. Ղաղարյանը. (Արկամեղ) իր «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում» զըբույլի մեջ («Զականիգա», 1927):

«Թող պայծառ լինի նրա հիշատակը» (!) (ընդգծումը մերն է Մ.¹):

Կամ թե, որինակ, դատողությունները վերածնվող Հայաստանի²) մասին: Չե՞ վոր դա կատարյալ տեսկցիա չէ, բացահայտ նպատառումն ամենավերական մտայնության: Մինչդեռ—նման դատողությունները տեղ են գտնում նույնիսկ տպագիր խոսքի մեջ: Բերենք փաստեր:

Հայաստանի Ոգնություն Կոմիտեն մի չերկուտարի սրանից առաջ Մոսկվայում հրատարակում էր մի հանդես, վոր կոչվում էր «**Վերածնվող Հայաստան**»: Կոմունիստների խմբագրությունը³) հրատարակվող, սակայն իր ելուծյամբ ակնահայտ նացիոնալիստական այդ որդանի 1-ին համարի առաջադրողը «հայ ժողովրդի» կրած պատմական տառապանքների ու սարսափների» մասին չերկար դատողություններ անելուց հետո, հաղորդորդում է, վոր այսօր **ԽՍՀՄ** կազմում «Հայաստանը վերջնականապես և առմիշտ առաջադրում է իր **վերածնունդը**» (!) լողունգը:

Վո՞ր հայրենիքի, ի՞նչ վերածնունդի մասին և դատողություններ անում այստեղ կոմունիստ-խմբագիրը:

¹) Գոհունակությամբ արձանագրում ենք, վոր այն ընկերը, վոր բաց էր թողել այդ հոդվածը, արդեն հեռացված է ղեկավար աշխատանքից «Խ. Հ.-ում»:

²) Իդիպ, այդպես և կոչվում ընկ. Կարինյանի հոդվածը Բաղվի «Կոմունիստի» № 95-ում (28 թ.):

³) Այս հանգամանքը հաստատում է Հովի Կենտրոնական Վարչությունը փոխնախագահ ընկ. Գր. Վարդանյանը:

«**Մի ժամանակ Մեծ Հայաստանը**,—պատասխանում է նա մեզ,—չերկար դարեր տառապում էր բռնակալության և միապետության շղթաներում: Վերջապես շղթաները թոթափված են, նվաճված է վաղուց սպասված ազատությունը:

... Խորհրդային իշխանությունը վերադարձրեց (!) Հայաստանին անդորրություն և ստեղծեց խաղաղ գոյություն հնարավորություն: Սա բացվում—գլուղացիական գիկհասունացի (!) պատմական չերախտիքն է» (ընդգծումները մերն են Մ.):

Մենք ժամանակ չունենք դասեր տալու «հայերի» կենսական շահերը պաշտպանող» այդ որդանի խմբագրին այն մասին, վոր Խորհրդային իշխանությունը բանվոր և **միախյճ** բանվոր դասակարգի ղեկատուության է: Ժամանակ չունենք, վորովհետեւ նախ կոմունիստ-խմբագիրն այդքանը պետք է իմանա և չերկրորդ՝ դա տվյալ գեպը մեզ համար չերկրորդական բան է: Մեզ հետաքրքրում է մեկ ուրիշ բան—Հայաստանի **վերածնունդը** տեսությունը, —այն հարցը, թե այդ կոմունիստ-խմբագիրն ինչպես է լուրացրել Խորհրդային Հայաստանի քաղաքական ելուծյունը: Ի՞նչ է այդ—**պրոլետարական ղեկատուության հանրապետություն**, վորի հիմքն են կազմում բանվոր դասակարգի միջազգային շահերը, թե բուրժուական-ազգային ավտոնոմիայի հանրապետություն, ստեղծված միացյալ Հայաստանի գաղափարի հիմունքով: Ինչպես ընթերցողը տեսավ, խմբագիրը վճռական կողմնակիցն է **չերկրորդի**:

Այդ հանդիսի № 2-ում տպված դիմում-կոչի մեջ բառացի տպված է հետեյալը.

«Հայաստանի լեզվի հայ ժողովրդի բնօրինակ վերածնության այս հանդիսավոր ժամին անհրաժեշտ է, վորպեսզի ամեն մի հայ, վորեք էլ նա դառնա՝ լինի, կապվի կենդանի կապով հայրենիքի լեզվի ազգակիցների հետ» (եջ 17, ընդգծումը մերն է Մ.):

Հայ մարդ,—վորեք էլ դու գտնվելիս լինես, հավատարիմ մնա մեծ հայ ազգին, վորն այժմ «ապրում» է ազգային (1) վերածնության երան («Վերածնվ. Հայաստ.», № 3, եջ 13)—ահա «Վերածնվող Հայաստան» հանդիսի և նրա խմբագրի ղեկավար սկզբունքը:

Յերկարորեն մեկնաբանել բերված քաղվածքներն ավելորդ է:

Պարզ է, վոր Հայաստանի վերածնության թեզիսը խորը ոեակցիոն թեզիս է, վորովհետև՝ կամ Հայաստանի կոմկուսակցությունը վերածնում է իշխանների և յեպիսկոպոսների, խմբագրատների և մատղիների ստանդարտի, կամ կառուցում է նոր սոցիալիստական Հայաստան:

Ուստի խոսել Հայաստանի վերածնության մասին, նշանակում է ժխել նոր սոցիալիստական Հայաստանի ծնունդը:

Այսպես և միայն այսպես է դրված խնդիրը:

Կրկնում ենք, նման գրությունները, ինչպես և դատողություններն Անդրկովկասի հանրապետությունների միջև իբր թե գոյություն ունեցող անհավասարության մասին—դատողություններ, վորոնք հաճախ

քողարկվում են ինտերնացիոնալ ֆրադարանություն¹⁾ քեզավորում են սոենավեխականներին:

Նացիոնալ-դեմոկրատիզմի նման լեյութեններին այսուհետև կտրվի վճռական բայլելիկյան հակահարված:

Հով. Քաջազնունու «համառ հավատին, թե ներանք (բայլելիկները. Մ.) նույնպես հայեր են և նույն չափով... թե կոմունիզմը (իրեն այդպիսին նա արգելք չի (?! Մ.) չի խանդարի նրանց զգալ լեզվ խորհել հայի պես»,—վիճակված չե իրականապես, վորովհետև բայլելիկական կուսակցությունը միջազգային ավանգարդ է, նա ինտերնացիոնալ ուժ է և դեպի «ազգային կյանքի նեղ շրջանակները» չի շեղվի:



¹⁾ Նորիս մի պատասխանատու ընկեր լրջորեն պնդում էր, վոր քաղաքական անհավասարության Անդրկովկասի հանրապետությունների միջև նա չի գտնում. բայց անհավասարությունն եկոնոմիկայի բնագավառում—չէ՛ վոր այդ «չի կարելի ժխտել»:



ՀՀ Ազգային գրադարան



NI 0416349

12,429